Քայլ 1: Ապահովեք ձեր տարածքը

Երկրաշարժից պաշտպանվելու յոթ քայլերը

Earthquake Country Alliance



Երկրաշարժի ցնցումները կարող են ցնցել գրեթե ամեն ինչ, նույնիսկ մեծ կամ ծանր իրերը: Պատկերացրեք, որ ձեր տունը կամ աշխատավայրը ցնցվի երկրաշարժից՝ կողքերից և վերև-ներքև: Ի՞նչը կարող է շրջվել: **Ինչպե՞ս կարող եք դա կանխել:**



ՍԿՍԵՔ ԱՅԺՄ `տեղափոխելով կահույքը, օրինակ՝ գրապահարանները հեռու տեղափոխեք մահճակալներից, բազմոցներից կամ այլ վայրերից, որտեղ մարդիկ նստում, քնում կամ շատ ժամանակ են անցկացնում: Ծանր առարկաները տեղափոխեք դեպի ներքևի դարակները և գրապահարաններն ամրացրեք պատերին: Այնուհետև շարունակեք ձեր **«վտանգների որսը»**՝ գտնելու և շտկելու այնպիսի իրեր, ինչպիսիք են՝ հեռուստացույցները, համակարգիչները, կահույքը, ջրատաքացուցիչները և այլն, որոնք ամրացված չեն: Օգտագործեք ստորև բերված գծապատկերը՝ կազմելու ցուցակ այն ամենի համար, ինչ ձեզ հարկավոր է այս իրերն ապահով տեղադրելու համար և պլանավորելու, թե ինչպես դա անել: Իրերի մեծ մասի ապահով տեղադրման մասին ուղեցույցը կարող եք գտնել այստեղ **EarthquakeCountry.org/step1**.

Իրը Ապահով տեղադրել կամ տեղափոխել	Վայր	Ինչպես	Ո՞վ	Ե՞րբ



Cal OES GOVERNOR'S OFFICE OF EMERGENCY SERVICES

FEMA

nehrp

© 2021 Earthquake Country Alliance